

ՃԼԹ

ՅՈՒՂԱՐԿԱՆՈՐՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ԵՒ ՀՈՅԱՎԱՊ

ՅԵԿՈՐԵՅ ՉԷԼԷՊԻՈՅ

ՏԻՒՋԵՆՅՑ



Handwritten text at the top of the page, possibly a date or reference number.

28  
5-72

USDA 1861

# Ճ Ա Ռ

ՅՈՒՂԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ԵՒ ՀՈՅԱԿԱՊ

ՅԵԿՈՐԵՅ ՉԷԼԷՊՈՅ

## ՏԻՒՋԵՆՆՅ

ՁՈՐԻ 14 (2) ԱՐԳՈՍՏՈՍԻ ԻՕՍԵՑԷԻ

Հ. ԹԵԳԷՆՈՍ Վ. ՄՈՒՐԵՏԵՆ

Ի ՄԻՒԹ. ՈՒԽՏ. ՎԻԷՆՆ.

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՋ

ՅԻՍՈՒՍԻ ՓՐԿԶԻ

Handwritten vertical text on the left margin.

Handwritten number 515

### Ի ՎԻԷՆՆԵ


Ի ՎԵՆՍ ՊԵՇՏՊ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1847. ՈՒՄՂ.Օ.



217

217



**Ք**ՐԱԽԾՈՒԹԵԱՆ ԵԼ զսգոյ ճառս՝ զոր ինձ  
ի յուղարկաւորութեան երջանիկ եւ անմահ յիշա-  
տակաց արժանի Հարազատին Չերոյ ի Մայր եկե-  
ղեցւոջ անդ խօսել վիճակեցաւ, չէր այնպէս ի դէպ  
այլում ումք ի նուէր մատուցանել, որպէս Չե-  
րում ազնուական զարմիդ՝ որ զնորին քաջութեան  
եւ զիմաստութեան զնմանութիւն յանձին ծաղկե-  
ցուցանէ. զի թերեւս սոյն՝ սիրտիանս իմն կարիցէ  
տալ տխրութեանն պատելոյ զսրտիւք Չերովք:

**Ի** բանից անտի՝ որ ի հասարակաց եւ որ  
յառանձինն գիրս ընթացան եւ ընթանան յազ-  
գիս, եւ քան զմիջօրեայ պայծառագոյն ցուցանեն  
թէ որչափ սիրելի ազգին երջանիկ եւ արագա-  
վախճան Նորին կեանք էին, իմ բանք՝ յորոյ ի  
կատարումն կարճութիւն ժամանակին հազիւ ժամ  
ինչ շնորհեաց ինձ, արդարեւ խոնարհագոյնք են.  
բայց ազգին՝ որոյ գութ եւ շնորհակալու միտք  
ոչինչ ցանկալի քան զյիշատակս իւրոյ խնամա-  
ծուին համարի, զոր օրինակ արգահատութեան

արժանի դտան, նոյնպէս եւ փութանակին ի լոյս  
ելանել եղեւ ցանկալի եւ փափաքելի: Աւար-  
դարեւ եթէ բանիցն նուազութիւն չիցէ արժանի,  
քաջութիւնք եւ անուն եւ ամենայն համօրէն  
բարեացն արդասիք Հանդուցելոյն, յորոց աստ  
սակաւք ի բազմաց ի գովութիւն առեալ հռչա-  
կին, քաջ արժանի մշանջենաւոր անեղծութեան  
են, զոր իցէ թէ շնորհէր նմա դրոշմ արձանա-  
գրիս այսորիկ, թէ եւ «Աս անձամբ անձին արձան  
անեղծութեան ի միտս որդւոց ազգին իւրոյ է:  
Հասլա ընկալցի անարդամեծար մեծութիւնդ զսա՝  
որ առհաւատչեաց է համօրէն ազգին, իմոց եղ-  
բայրակցաց եւ իմոյ սերտ սիրոյն որ առ սլա-  
տուական Տոհմդ եւ առ Արդարն հանդուցեալ,  
որոյ յիշատակ օրհնութեամբ եղիցի:

ԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ

Հ. ԹԱԳԷՈՍ Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ, Կ. Մ.

Ո՞վ է արդեօք, կը հարցընեմ, Հայրենակիցք  
իմ, ո՞վ է որ այսօր ձեզ ամէնքդ աս մայր եկե-  
ղեցւոյս մէջ ժողովեց բերաւ: Են առաքինի ու  
երեւելի Ենձը՝ որուն նմանը ինչուան հիմա քիչ  
եղած է, որն որ իր հայրենեացը, իր ազգին ու  
ուրիշ ազգերուն ալ աղէկութեանը այնպէս օղ-  
տակար եղած ըլլայ: Ինքը՝ ինչպէս իր կեն-  
դանութեան ատեն մեծ տօնախմբութիւններուն  
ներկայ գտնուելու համար՝ իր շքեղ օրինակաւը  
ամէնքդ նաեւ հեռու տեղերէ կը ժողովէր հոս կը  
բերէր. նմանապէս այսօր իր թաղման փառաւոր  
ու մեծաշուք հանդէսին ներկայ գտնուելու հա-  
մար նորէն հոս հրաւիրեց:

Բայց այսօր ի՞նչ զգածմունքով, ի՞նչ սրտով  
ամէն մէկերնիդ աս եկեղեցւոյ մէջ եկեր ժողովեր  
էք. հարկ չկայ որ երկայն խօսքերով մեկնել ուղե-  
լովս՝ ամենուս սիրար տոչորող շմարելու կրակը  
աւելի եւս բռնկցընեմ: Տարակոյս չունիմ որ աս  
մօտերս պատահած Գանիէլ Օ՛Գոնելին մահը՝  
(ան երեւելի մարդուն՝ որն որ Արլանտայի հռչա-  
կաւոր պատգամաւորը, իր հայրենեացը ազատիչն  
ու բարերարն էր, ու իր հիւանդութենէն ազատե-  
լու համար՝ դէպ ի Նտալիա ըրած ճամբորդութեան  
մէջ վախճանեցաւ,) Արլանտայի ժողովրդեան ինչ

ազգեցութիւն ըրաւ, ինչ սուգ, ինչ տրամու-  
 թիւն պատճառեց նէ, նոյն ազգեցութիւնը ձեզի  
 ալ ըրած ըլլայ, Հայրենակիցք իմ, նոյն սուգը,  
 նոյն տրամութիւնը բոլոր մեր ազգին ալ պատ-  
 ճառած ըլլայ՝ աս ազնուամեծար ու ազգասէր  
 ու բարերար Տիւղեան Յակոբ Չէլէպւոյն վաղա-  
 հաս մահը, որն որ նմանապէս իր հիւանդութե-  
 նէն ազատելու համար՝ դէպ ի Նտալիս ըրած ճամբ  
 բորդութեան մէջ մեզմէ յափշտակեցաւ: Երլան-  
 տացիք իրենց Օ՛գոնելին մահուան սուգը կա-  
 տարելու ատեննին՝ աս ողորմուկ խօսքերով իրա-  
 րու սիրտը կը շարժէին. Ահա, կ'ըսէին, Երլան-  
 տայի կենդանութիւն տուող շունչն ու հողին  
 դնաց, ազգին լոյսը մարեցաւ, ասով իրարու ձայն  
 տալով՝ կու լային ու կ'ողբային: Մեր ազգն ալ  
 նոյն ողորմուկ խօսքերը աս ազնուամեծար Տիւ-  
 ղեան Չէլէպւոյն մահուանը վրայ կրկնելով՝ մխի-  
 թարութիւն կը բնտռէ: Ահա մեր փոքրիկ ազ-  
 գին երեւելի Օ՛գոնէլը, որուն կենդանութիւնը  
 ամենուս սրտին բարձրութիւնն ու պարծանքն էր.  
 Հիմա իր մահը ամենուս սրտին սուգն ու կսկիծն  
 եղաւ, ու իր անշունչ մարմինը աչուրներնուս  
 առջին ցաւալի տեսարան մըն է:

Քանի որ աս ցաւալի տեսարանը աչուրներ-  
 նուս առջեւէն զատուած չէ, քանի որ աս մեծ  
 կորուստը երեւակայութիւններնուս մէջ կենդանի  
 է, ո՞վ կրնայ համարձակիլ, որուն բերանը յա-  
 ռաջ կ'երթայ աս մեծաշուք չու պատուական Ան-  
 ձին առաքինութեանց ու վարուցը վրայ խօսելու:  
 Իզմէ աւելի քաջ ճարտարախօսներ աս համար-



ձակութիւնը չունենալէն ետեւ՝ ես աս իմ տկար  
 մտքովս ու տկար լեզուովս ինչպէս կրնայի ունե-  
 նալ, թէ որ Չեր քաղցր հրամանը, ամենապատիւ  
 Վախագահ Տէր, զիս չպարտաւորէր: Արաւ այսօր  
 խօսելու օր չէր, ներքին ու խորունկ սգոյ մը օր  
 էր: Բայց Վուք, ամենապատիւ Վախագահ Տէր,  
 աս մեծաշուք ու պատուական Անձին վրայ՝ ներ-  
 քուստ ունեցած Չեր սրտին խորին մեծարանաց ու  
 յարգութեան վկայութիւնը ցուցնելու համար՝  
 կամք ըրիք ու բաղձացիք որ իր թաղման փառաւոր  
 հանդէսը կատարուելու ատեն՝ դովութեան ար-  
 ժանի վարուցը վրայ, ազգին կողմանէ ի նշան  
 շնորհակալութեան ու մեծարանաց՝ պատշաճ ճառ  
 մը խօսուի: Արպէս զի, ինչպէս որ իր օտար երկրի  
 մէջ վախճանած մարմինը՝ նորէն իր հայրենիքը  
 դառնալ ու իր հայրենեացը ծոցը թաղուիլ ու-  
 ղելով՝ իրեն արդեանցը արժանավայել թաղման  
 հանդէսէն չզրկուեցաւ, նոյնպէս իր անցուցած  
 վարուցը արժանավայել դովութենէն ալ զուրկ  
 չմնայ: Բայց որչափ որ ալ ես զիս այսպիսի երե-  
 ւելի Անձի մը վրայ խօսելու անկարող կը տեսնեմ,  
 այնչափ ալ ուրախ եմ մտածելով որ ունկնդիր-  
 ներս՝ ըսածներս ճարտասանական արուեստի դիւտ  
 մը չեն սեպեր: Ճարտասանութիւն ու արուեստ  
 ան ատեն հարկաւոր է, երբ որ խօսողին առջեւի  
 նիւթը՝ դովութեան արժանի նիւթ մը չէ. իսկ  
 իմ խօսելու բաներս՝ որուն համար են նէ, ար-  
 դէն պղտիկուց ի վեր քրիստոնէական կատարելու-  
 թիւններով լեցուած, աստուածահաճոյ առաքի-  
 նութիւններով զարդարուած, ազգասիրութեան

հողւով կրթուած, խոհական ու ակնածելի վարմունքով, արդիւնաւոր դորձքերով, գիտնական սկզբունքներով, ու հեռաւես մտքով ու ճարտարութեամբ, բոլոր Օսմանեան տէրութեան մէջ հռչակուած երեւելի Անձ մը ըլլալով՝ ինծի նիւթ չպակսիր խօսելու. մանաւանդ թէ խօսածներս՝ ամենուն գիտցածն ու վկայածն է:

Ամէն մարդ գիտէ որ աս հռչակաւոր Անձը՝ հարիւր յիսուն տարիէ վեր երեւելի եղած ազնուական ցեղէ մը յառաջ եկած է, ու ան ցեղին ազնուականութիւնը պղտիկուց վեր՝ իր վրայ եւելօք վայլեցուցած ու անձնական ազնուականութեամբը, առաքինութեամբն ու բարուց ծանրութեամբը ինքը զինքը ամենուն ակնածելի բրած է: Ար ցեղին սեպհական առաքինութիւններուն հետեւող ըլլալէն զատ՝ իր գերդաստանին ու բոլոր ազգին մեծ պարծանք ըլլալը, իր կրօնասիրութեան ու աստուածապաշտութեան եռանդը, ու ազգասիրութեան հողին՝ որով շատ բարեպաշտական ու ազգին օգտակար դորձքերու ձեռք զարնելով ու աշխատութենէ չփախչելով՝ ճարտարութեամբ գլուխ կը հանէր, ամենուն ծանօթ բան է: Ար սիրական ազգին թէ գիտնական սկզբունքներով, թէ բարոյական կրթութիւններով պայծառանալուն ու լաւագոյն վիճակի մը հասնելուն պատշաճ միջոցները միշտ մտածելն ու անդադար սիրտ հատցընելը՝ ամէնքը կը ճանչնան ու երախտադիտութեամբ յաւիտեանս պիտի յիշեն: Ախտնալով որ ազգի մը աղէկութիւնն ու պայծառութիւնը ամէն բանէն աւելի՝ ամէնքը

մի սիրտ մի հողի ըլլալէն յառաջ կու գայ, իր  
 գլխաւոր հողն ու ջանքը ասոր կը գործածէր :  
 Ազգին գլուխ գտնուած ըլլալով՝ թէ մեծին թէ  
 պղտիկին հետ ինչպիսի կերպով վարուիլը, ինչ-  
 չափ խոհեմութիւն, ինչպիսի խոնարհութիւն  
 գործածելը աղէկ գիտէր. ասով բոլոր ազգին  
 սիրտը շահելէն ետեւ՝ մէկ սիրտ մէկ հողի ու մէկ  
 գեղեցիկ ու զօրաւոր մարմին մը կը կազմէր :  
 Մէկուն գէշութիւն չուղելէն զատ՝ ամենուն աղէ-  
 կութեան ու հասարակաց օգտին բաղձացող ըլ-  
 լալը, խեղճութեան մէջ ինկող շատերուն ողոր-  
 մելով՝ զանազան կերպով օգնելը, ապրուստ չու-  
 նեցողներուն բաւական ապրուստ ձարելը, վեր-  
 ջապէս ազգին մէջ ատեն ատեն պատահած չա-  
 րիքներն ու անյարմար գործքերը խափանելու հա-  
 մար՝ իր թեւերը տարածելով ազգին պաշտպան  
 կենալը՝ իր ազգասէր, բարեսէր ու ողորմած  
 սրտին պտուղներն են :

Աս ամէն բաները ու ասոնցմէ զատ՝ աս Անձին  
 վրայ գտնուած ուրիշ կատարելութեան ձիրքերը  
 կը ցուցնեն որ յառաջուրնէ Աստուած զինքը մեծ  
 ու պատուաւոր աստիճանի մը պատրաստած ըլլա-  
 լով՝ զինքը առատութեամբ իր պարգեւներովը լե-  
 ցուցեր էր : Երեն մտաց ընդարձակութիւն ու խո-  
 րութիւն մը տուած էր, որով տէրութեան ծանր  
 գործքերը կառավարելէն ետեւ՝ զրսի ու ազգին  
 դժուարին գործքերուն ալ խելք կը հասցընէր :  
 Թէ որ գլխուն կազմուածքը՝ խորհրդոյ տաճար մըն  
 էր ըսելու ըլլամ, կարծեմ թէ չեմ սխալիր :  
 Ասկից ամէն մարդ կրնար իր գործքերը կառավա-

բելու հարկաւոր եղածին չափ խորհուրդ ու խրատ  
 ընդունել ու բաւական խելք սորվել . ասկից միշտ  
 գեղեցիկ գեղեցիկ խորհրդածութիւններ ու օգ-  
 տակար սկզբունքներ կը բղխէին : Ամէն ատեն՝  
 սկսելու կամ սկսած գործքերուն հետեւութիւն-  
 ները խորունկ մտածելով , հեռատես աչքով դա-  
 լու չարիքները տեսնելով՝ առջեւը առնուելու  
 միջոցներ բնտուելը , գալու բարիքներուն արդելք  
 մը չըլլալու համար բանեցուցած ճարտարութիւն-  
 ները՝ իր խորին մտայր յատուկ ծնունդներն էին :  
 Համառօտ ըսելու համար իր գործունեայ խելքին  
 համեմատ ունեցած խոհեմութիւնը՝ իր ամէն  
 գործքերուն ու խօսքերուն չափն ու կանոնն էր :

Բայց որչափ որ ալ աս խելքն ու խոհեմու-  
 թիւնը հասարակաց բարւոյն համար զգուշու-  
 թեամբ կը գործածէր , այսու ամենայնիւ արիու-  
 թիւնն ու արդարութիւնը ձեռքէ ձգած չէր .  
 փոքրոգութիւնն ու երկչոտութիւնը , որոնք որ  
 արդարութեան կշիռը կորսընցընել տալով՝ շատ  
 մնասներու պատճառ ու շատ օգտակար բաներու  
 ալ արդելք կրնան ըլլալ , պղտիկուց ի վեր յաղ-  
 թած կ'երեւար : Հարկ չկայ յիշել աս ազնուական  
 ցեղին գլուխը եկած ան աղետալի դիպուածը ,  
 որուն մէջ ինչ արիասիրտ , ինչ վեհանձն ու ինչ  
 հայրենասէր հողի ունենալը՝ յայտնի ցուցուց , երբ  
 որ իր անձը մօտաւոր մահուան վտանգէն ու նե-  
 ղութենէն ազատելու ձեռքը՝ յարմար միջոց մը  
 կամ առիթ մը ունենալով , մանաւանդ թէ վտան-  
 գէն հեռու ու ազատ ըլլալով , աս բանիս համար  
 բարեկամարար իրեն խրատ տուող եղաւ ալ նէ՝

չուզեց, չընդունեցաւ: Աոյն ատենը մահուան վտանգէն փախչել ուզելը՝ իր արիական վեհանձնութեանը նախատինք մը, ու իր հարազատ եղբարցը, իր գերդաստանին ու բոլոր ազգին ազատութեանը վնասակար սեպելով՝ ամէն նեղութիւն յանձն առաւ, իր կեանքը վտանգի մէջ դրաւ, որով զամէնքը զարմացուց ու ապշեցուց: Ահա զարմանալի արիութեան ու քաջասրտութեան օրինակը՝ որն որ երիտասարդութեան ատեն բոլոր աշխարհքին ցուցուց, ու պատմութեանց յիշատակարաններու մէջ գրուելու արժանի է:

Աս զարմանալի գործքս՝ իր անձնական շահն ու օգուտը ամենեւին ատեն մը չուզելուն չընտելուն, իր միտքն ու կամքը մանաւանդ թէ բոլոր ինքը զինքը հասարակաց բարւոյն համար անխնայ գործածելուն, ու գրեթէ բոլոր իր կեանքը հասարակութեան կենդանի զոհ մը ըրած ըլլալուն յայտնի վկայութիւնն էր, բայց վերջին վկայութիւնը չէր: Բոլոր իր կենացը մէջ ո՞վ կրցաւ զինքը համոզել որ ծանր ծանր աշխատութիւնները մէկ դի ձգելով՝ քիչ մ'ալ իր մարմնոյն հարկաւոր հանգստութեանը ու մարդկային տկար բնութեան պատշաճաւոր զբօսանքներուն միտ դնէ: Չէ. իր առողջութեան պէտք եղածին չափ ալ հանգստութեան ու դիւրութեան չէր նայէր: Գործունեայ ու աշխատաւոր մեղուի մը պէս՝ միշտ ասդիէն անդիէն մտքին մէջ պիտանի բաներ ժողովելու, ու մարդկային ընկերութեան օգտակար գործքեր գործելու ետեւէ ինկած էր. ու միայն այնպիսի պիտանի գործքերէն ու աշխատութիւն-

ներէն սրտի զուարճութիւն կ'իմանար, միայն անոնցմով կը զբօսնուր:

Ասոնք էին իր առաքինութիւնները, ասոնք իր բնական ձիրքերը: Բայց ի՞նչ, ան դառն ու անողորելի մահը՝ իր սքանչելի կենացը թելը կտրելով՝ այսչափ առաքինութիւնները, այսչափ դովելի ձիրքերը մեզմէ, յափշտակեց, կողոպտեց: — Սակայն այսպիսի մեծ աղետից մէջ աս ալ մեզի քիչ մտիթարութիւն չէ, Հայրենակիցք իմ, որ աս մեծ դանձին յարգը, ինչպէս սովորաբար կ'ըլլայ, կորսընցընելէն ետքը ճանչցանք. չէ, չէ. միշտ ճանչցած էինք, միշտ կը յարգէինք. մահուան դէմ ունեցած տրտունջնիս ան է, որ աւելի վայելել կ'ուզէինք: Միայն մենք ալ չենք որ յարգը ճանչցանք ու կը ճանչնանք. այսպէս քիչերու վրայ դանուելու առաքինութիւններով ու կատարելութեան ձիրքերով զարդարուած երեւելի Մնձ մը, բոլոր Օսմանեան տէրութեան օգտակար Մնձ մը, կարելի բան էր որ մեծափառ Թաղաւորին ու մեծամեծներուն սիրելի ու յարգի, ու իր մահն ալ ցաւալի եղած չըլլար: Ահա թաղաւորներէն ընդունած ան պատիւը, ան պատուոյ նշաններն ու բարձր աստիճանները, ըսէք, ինչուան հիմա Օսմանեան տէրութեան հպատակներուն մէջ որո՞ւն տրուած է, ցուցուցէք մէկը՝ որ ասոր պէս իր արժանապատուութեամբն ու ազնուական արդիւնքներովը թաղաւորական երեւելի պաշտօնեաներուն ու մեծամեծներուն կարգը անցած ըլլայ: Անոր համար չեմ զարմանար երբ որ ասանկ չգանուած մեծի ու իշխանի մը մահուրնէ ետեւ

կը տեսնեմ մեր ազգին ընդհանուր սուգն ու տրտմութիւնը՝ որով բոլոր աշխարհքիս կ'ուզէ ցուցընել թէ ինչ մեծ կորուստ է ըրած կորուստը:

Դայց ի՛նչ օգուտ . մինչեւ հիմա խօսած աս առաքինի ու երեւելի Անձին վարքը ու վարուցը վրայ փայլած ան կատարելութիւնները, ան ազնուական ձիրքերը՝ երբ որ միտքս կու դան, երբ որ աչքիս առջին մէկիկ մէկիկ կը շարուին, ձեզի հետ մէկտեղ, Հայրենակիցք իմ, սրտիս մէջ մեծ ցաւ կ'իմանամ, աչուքներս արցունքով կը լեցուին, այնպէս որ եթէ կարելի ըլլար՝ Արեմիա մարգարէին պէս բարձր ձայնով մը կը գոչէի. «Մ տայր զգլուխ իմ ի ջուր եւ զաչս իմ յաղբիւրս արտասուաց», որպէս զի կարող ըլլայի դառնապէս աս մեծ կորուստը լալ: Աորսընցուց Օսմանեան տէրութիւնը իրեն խիստ պիտանի ու օգտակար Մարդ մը: Աորսընցուց իր հայրենիքը մեծ ու խիստ խելացի ու ազնուական Անձ մը: Աորսընցուց ազգը իր փառքն ու պարծանքը, իր երախտաւորն ու բարերարը: Ա երջապէս կորսընցուց իր ընտանիքը՝ չղանուելու անդին մարգարիտ մը: Ա՛հ ո՛հ . ան երեւելի ու առաքինի Անձը, ան ազգին երախտաւորն ու բարերարը, ալ չկայ . իր յարգը թէ մեր ազգին ու թէ ուրիշ ազգերուն ալ աւելի ձանցընելու համար դնաց զատուեցաւ մեզմէ . ան ազնուամեծար Անձը, ան արթուն ու խորին միտքը մշանջենաւոր քնոյ մը մէջ ինկաւ, ալ արթըննալիք չունի . ան մեծանձն սիրտը դադրեցաւ թնդալէն . մեռաւ, մեռաւ Տիւզեան Յակոբ Չէլէպին . . . :

Նայց չէ չէ. կը սխալիմ. ինչո՞ւ մեռաւ կ'ըսեմ, ան որ դեռ կենդանի է ու միշտ անմահութեան երջանիկ վիճակի մը մէջ կենդանի պիտ'որ մնայ: Չէ, չմեռնիր, կ'ըսէ սուրբ Օգոստինոս, ան մարդը՝ որն որ մեռնելէն յառաջ աղէկ ապրեր, բարի վարք ունեցեր է: Աւրեմն այդպիսի բարի, առաքինի ու դովելի վարք ունեցող աս ազնուամեծար Տիւղեան Յակոբ Չէլէպին, որուն աստուածապաշտութեան ու կրօնասիրութեան բոլորքը սրտին մէջը ամենեւին մարած չէր, ան որ իր Տիրոջը քանքարը, Աստուծոյ ընդունած բնական ձիրքերը, ան մեծութիւնը, ան փառքը, ան պատիւը, ան մեծ համարումը, ան փարթամութիւնը, ան խորունկ խելքը միշտ օգտակար ու արդիւնաւոր գործքերու մէջ բանեցուցած ըլլալով՝ անոնցմէ իր հոգւոյն մեծ շահ պատրաստած է, չմեռաւ. այլ ստուգիւ սուրբ Աւետարանին մէջը յիշուած բարի ու հաւատարիմ ծառաներուն կարգը անցաւ, որոնք իրենց Տիրոջը յանձնած քանքարը ու պարգեւները բանեցուցած ու շատցուցած, ու իրենց Տիրոջը մեծ շահ ցուցուցած ըլլալով՝ յաւիտենական ուրախութեան արժանի եղած են, լսելով Քրիստոսի բերնէն ան կենդանութիւն տուող խօսքը թէ՛ «Օտաւայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն Տեառն քո»:

Աւրեմն, կ'ըսեմ դարձեալ, Աստուծոյ աս բարի ու հաւատարիմ ծառան, աս մեր ազնուամեծար Յակոբ Չէլէպին չմեռաւ, հասկա աշխարհ-



քիս մեծութիւնը՝ յաւիտենական մեծութեան մը, անցաւոր փառքը՝ չվերջանալու փառքի մը, իր մահկանացու վիճակը՝ անմահութեան վիճակի մը փոխեց . վերջապէս չմեռաւ, այլ դնաց իր սուրբ հաւատքովը ու արդիւնաւոր դործքերովը Տիրոջմէն արդարութեան պսակը ընդունելու : Մեռաւ, կ'ըսեմ միայն անոր համար, որ աս վշտալից ու տանջուելու աշխարհքիս մէջէն ելաւ, իր գերդաստանէն զատուեցաւ ու իր ազգին մէջէն պակսեցաւ : Բայց չէ. հոս ալ կը սխալիմ . մեռնելով ինչո՞ւ պիտ'որ զատուի իր տնէն, ինչո՞ւ պիտ'որ պակսի ազգին մէջէն. չէ : — Փիլիպպոս Մակեդոնացւոց մեծազօր թագաւորը՝ մեռնելու ատեն իր քովը գտնուող մեծամեծներուն դարձաւ «Մի կարծէք, ըսաւ, թէ ես կը մեռնիմ, չէ. ինչու որ իզմէ ետքը Աղէքսանդր իմ որդիս թագաւորութեանս յաջորդ կը թողում» : Վիտէր աս իմաստուն թագաւորը՝ թէ իր յաջորդը այնպիսի մէկն էր՝ որ իր թողուցած թագաւորութիւնը չկորսընցընելէն զատ՝ ալ աւելի ընդարձակելու ու մեծցընելու կարող ըլլալով, Փիլիպպոս Մակեդոնացւոց մեծազօր ու իմաստուն թագաւորը մեռաւ ըսել պիտ'որ չտար :

Ահա մեր բարեաց յիշատակաց արժանի Հանգուցեալն ալ իրմէ ետքը մեծութեան ու ազգասիրութեան շքեղ ու գերապանծ օրինակներ ձգելէն ի զատ, իր օրինակներուն հետեւող արժանաժառանգ յաջորդներ ալ թողուց, որոնք բոլոր ազգերնուս աս մեծ ակնկալութիւնը կու տան, թէ անոր առաքինութիւններուն ու կատարելու-

Թիւններուն հետեւելով՝ ազգը կառավարող ան  
խելացի գլուխը, ան երախտաւորն ու բարերարը,  
ան ակնածելի Մնձր, Յակոբ Չէլէպին, ազգին  
մէջէն պակսեցաւ, մեռաւ ըսել պիտ' որ չտան:  
Ահա իր իշխանազուն Արդիքը, ահա իր հարա-  
զատ արժանապատիւ Աղբարքը, ահա իր պա-  
տուական ու ազնուաշուք Աղբօրորդիքը, որոնց  
ջանքովն ու աշխատութիւնովը՝ աս ազգը բարե-  
յիշատակ Հանգուցելոյն կենդանութեան ատենը  
ունեցած իր երջանիկ վիճակը չկորսընցընելէն զատ՝  
ալ աւելի երջանիկ ու բարեբախտ ըլլալու մեծ  
յոյս ունի:

Միայն թէ դու, Տէր Աստուած ամենա-  
զօր, դու՛ որ աս ազնուաշուք Տիւղեան գերդաս-  
տանին վրայէն նախախնամութեան աչուրներդ  
երբեք վերցուցած չես, ու անոնցմով աս ազգին  
վրայ քու բարերարութեան խնամքդ շատ անգամ  
ցուցուցած ես, ազգովին կ'աղաչենք քեզի որ աս  
բարեյիշատակ Ա շխճանելոյն կսկիծը մոռցընելու  
համար՝ մնացողներուն երկար կեանք պարգեւես,  
ու քու գթութեամբդ հաստատ պահես թէ զա-  
նոնք ու թէ ազգին ուրիշ մեծերը, որպէս զի  
կարող ըլլան քու շնորհքովդ ու հզօր զօրու-  
թեամբդ աս ազգին՝ ուղղափառ հաւատքով ու  
բարի վարքով պայծառանալուն դորձակից ըլլալ:

Միանգամայն ի խորոց սրտի կ'աղաղակենք  
ու կը պաղատինք քեզի, բաբերար Տէր, որ մեր  
աս բարեյիշատակ Հանգուցելոյն հոգւոյն համար  
մատուցած խոնարհ պաղատանքներն ու անմահ  
պատարագները ընդունիս, եւ զինքը արքայու-

Թեանդ մէջ քու ընտրելոցդ կարդը դասելով՝  
 ամենապայծառ երեսացդ տեսութեանը արժանի  
 ընես: Մեր արցունքներն ու աղօթանուէր մաղ-  
 թանքները վերանան, մարդասէր Տէր, քու աթո-  
 ռոյդ առջեւը, ու իջեցրնեն իր վրայ քու ողորմու-  
 թիւնդ: Պարգեւէ, Տէր, պարգեւէ իր հոգւոյն  
 յաւիտենական փառքը՝ որուն համար աշխարհքիս  
 վրայ մարմինը նեղութիւն ու վիշտ ունեցեր է:  
 Քու մշտնջենաւոր լոյսդ իր վրայ ծագէ, որով  
 կարող ըլլայ քու ամենասուրբ Արրորդութեանդ  
 տեսութեան մէջ իր յաւիտենական հանգիստը  
 գտնել. «Օ, ի հանգիցէ ի խաղաղութեան», Ամէն:

